1920Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՏԴ 93/94
DOI: 10.56246/18294480-2024.17-21

ՄՈՎՍԵՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող
էլփոստ՝narinem2006@gmail.com

1920թ. թուրք-հայկական պատերազմի տարբեր հարցերի վերաբերյալ իր ուրույն խոսքն է ասել սփյուռքահայ պատմագիտությունը: Հոդվածում ներկայացված է պատերազմի նախօրյակի ռազմաքաղաքական իրավիճակի անդրադարձը սփյուռքահայ պատմագիտության մեջ, որը խիստ կարևոր է՝ վերլուծելու և պարզաբանելու պատերազմի պատճառները, բնույթը, ընթացքն ու ավարտը:

Աշխատանքի մեթոդաբանական հետազոտության համար կարևորել ենք սփյուռքահայ գործիչների աշխատությունները, հուշագրություններն ու հոդվածները: Այդ աշխատանքների մի մասն սկզբնաղբյուրային նշանակություն ունի, քանի որ դրանց հեղինակներն ապրել են նշված ժամանակաշրջանում կամ դրանից ոչ այնքան ուշ:

Հոդվածի նպատակն է վերհանել սփյուռքահայ պատմագիտության դիրքորոշումը հարցի նկատմամբ, ինչը կատարվում է առաջին անգամ: Հոդվածի արդյունքում բացահայտվում են հեղինակների մոտեցումները այն իրադարձությունների վերաբերյալ, որոնց պատճառով 1920թ. աշնանը հայ ժողովուրդը ստիպված էր դիմակայել թուրքական հարձակմանն ու լայնածավալ պատերազմին: Այդպիսով, սփյուռքահայ պատմաբանները լայն պատկերացում են տալիս ռազմաքաղաքական անբարենպաստ իրավիճակի մասին, քանի որ նրանք բավականին մանրամասն լուսաբանում են թուրքական դիվանագիտության ռազմավարությունը և նպատակները, նախատեսվող հարձակումը: Գլխավոր փաստարկներն էին Հայաստանի Հանրապետության ներքին իրավիճակն ու միջազգային դիրքորոշումը, հարևան երկրների հետ հարաբերությունները, քեմալականների համագործակցությունը բոլշևիկյան Ռուսաստանի հետ և դրա հետ կապված՝ Թուրքիայի ռազմական գործունեությունը տարածաշրջանում, պատերազմի անխուսափելիությունը, Կարսի անկման սոցիալական և ռազմական պատճառները:

Սփյուռքահայ պատմաբանների մեծ մասը 1920թ. պատերազմը համարում էր անխուսափելի: Նրանք միաժամանակ խոստովանում են, որ ՀՀ կառավարությունը ըստ անհրաժեշտության պատրաստ չէր պատերազմին:

Սույն հետազոտության արդյունքում կարող ենք շեշտադրել սփյուռքահայ պատմագիտության հիմնական մոտեցումները: Այն է՝ 1920թ. պատերազմի հետևանքով հայ ժողովուրդը հայտնվեց Թուրքիայի կողմից ոչնչացման եզրին:

Բանալի բառեր՝ *պատմագիտություն, Հայաստանի Հանրապետություն, Անդրկովկաս, քեմալական կառավարություն, թուրք-հայկական պատերազմ, ռազմաքաղաքական, խորհրդա-թուրքական հարաբերություններ:*

1920թ. թուրք-հայկական պատերազմի շատ հարցեր, չնայած հրապարակի վրա եղած բազմաթիվ ուսումնասիրությունների առկայությանը, ցարդ վիճահարույց են և վերագնահատման կարիք ունեն: Ըստ այդմ առաջնային է ոչ միայն բուն պատերազմի ընթացքի ու հետևանքների, այլև դրան նախորդող ժամանակաշրջանի իրադարձությունների վերաքննությունը, ինչը ևս մեկ քայլ է պատերազմի սկզբնավորման, Հայաստանի առաջին Հանրապետության պարտության և շատ այլ հարցերի նորովի լուսաբանման ճանապարհին:

Գևորգ Եազըճյանը գտնում է, որ պատերազմում պարտության, մասնավորապես Կարսի անկման պատճառները վերհանելու հարցում պատմագիտական մեծաքանակ գրականության մեջ ուշադրությունն առավելապես դարձվել է արտաքին և դիվանագիտական պատճառների վրա՝ հետին պլան մղելով ներքին՝ գաղափարական, ռազմական, ռազմահոգեբանական, վարչահիրավական և բարոյահոգեբանական պատճառները[1]: Վահե Արծրունին ընդգծում է թուրքերի հոգեկան ատելությունը հայերի նկատմամբ[2]:

Պետք է նշել, որ սփյուռքահայ պատմագիտությունը, ժամանակին ձերբազատված լինելով խորհրդային գաղափարախոսական կապանքներից, առավել բազմակողմանի մոտեցում ցուցաբերեց հարցի նկատմամբ, թեև որոշ հեղինակներ, լինելով ՀՀԴ անդամ կամ 1918-1920թթ. ընթացքում ՀՀ-ում պետական պաշտոններ զբաղեցրած անձինք, զերծ չէին կուսակցական կաղապարներից:

Սփյուռքահայ պատմագիտության համար քննարկման նյութ դարձան ՀՀ ներքին և արտաքին դրության, հարևան երկրների հետ հարաբերությունների, թուրք-ռուսական համագործակցության, Թուրքիայի կողմից տարածաշրջանում ռազմաքաղաքական գործողությունների, պատերազմի անխուսափելիության և դրան ՀՀ պատրաստ լինել-չլինելու, Կարսի անկման պատճառների և այլ հարցեր:

Հ. Յ. դաշնակցության անդամ, Հայաստանի առաջին Հանրապետության նշանավոր դեմքերից մեկը, Կարո Սասունին ներկայացնում է ՀՀ ներքին անկայուն վիճակը. «Հայաստանի կառավարությունը, նվիրված ըլլալով առօրյա անցքերուն, քիչ

---

[1] **Եազըճեան Գէորգ**, Կարսի 1920 թ. անկման խորքային պատճառները, Երեւան, 2007, էջ 7 :

[2] **Վահէ Արծրունի**, Հայ-տաճկական պատերազմը, հայ սպայութիւնը, Շատախ, Երեւան, 2002, էջ 27 :

ուշադրություն դարձուցած էր ներքին կյանքի ուժեղացմանը: Մեզի տրվելիք երկիրը, զինվորականորեն գրավելու պատրաստությունները տեսնված չէին, ինչպես նաեւ վարչական համապատասխան օրգաններ չկային»[1]: Նա գրում է, որ երկուսուկես տարվա մեջ զինվորական ղեկավարությունը չկարողացավ հայդուկային խմբերը վերածել կանոնավոր զինվորական մասերի, և դրանք անօգուտ դարձան լուրջ ձեռնարկումների համար: Պատերազմին նպաստեց կուսակցական պայքարը, կոմունիստական քարոզչությունը, «թալանի ախորժակը»՝ ռազմական և պետական պաշտոնյաների կողմից[2]:

1920թ. ապրիլի 26-ին Կարս ժամանած Կ. Սասունին արձանագրում է տեղում «Հասարակական եւ Հանրապետութեան շահերուն անտեսումը»[3]: Իսկ մայիսի 1-ին Երևանում բռնկված բոլշևիկյան հակապետական խռովության հետևանքով (բոլշևիկներին ձերբակալելու ամսի 6-ի կառավարության արձակած հրամանից հետո ռազմական գործողություններ էին սկսվել Կարսում՝ մայիսի 8-ին և Ալեքսանդրապոլում՝ մայիսի 10-14-ին) Հայաստանի կառավարությունը կրկին ներքին հարցերով էր կլանված, ինչից օգտվելով թուրքական և ռուսական բանակները մոտեցան Հայաստանին, բոլշևիկյան քարոզչության հետևանքով ՀՀ բանակի կարգապահությունը խաթարվեց, մարտունակությունն անկում ապրեց[4]:

Նոր խորհրդայնացած (1920 ապրիլի 28) Ադրբեջանի իշխանությունը, Մոսկվային թիկունք ունենալով, Հայաստանից սկսեց պահանջել Ղարաբաղը, Զանգեզուրը և Վեդի-Բասարը՝ իբրև «Ադրբեջանական հողեր»[5]: Ադրբեջանի թե՛ բոլշևիկները, թե՛ մուսաֆաթականները ձգտում էին Ադրբեջանը կապել «յեղափոխական» Թուրքիային, իսկ վերջինս ջանք չէր թափում Ադրբեջանը ուժեղացնելով պահել իր ազդեցության տակ և օգտագործել քաղաքական նպատակների համար՝ դարձնելով համաթուրքական գործունեության հենարան Կովկասում և Թուրքեստանում[6]:

Սփյուռքի հեղինակներն իրավամբ շեշտադրել են, որ այդ հարցում Ադրբեջանին ու Թուրքիային աջակցում էր բոլշևիկյան Ռուսաստանի կառավարությունը. «Եթե ռուսը ինքն իր ձեռքով չի կոտորեր, այդ դեռ չապացուցեր, որ ան մէկ օր, արհեստական նահանջով մը թոյլ պիտի չտալ Քեմալին հասնիլ մինչեւ Պաքու, հաւատալով, որ յաջորդ օրը քաղաքներ կամ կարմիր բանակայիններ կերթան Տաք Ջուրերը»,-գրում է Շահան Նաթալին[7]: Քյազիմ Կարաբեքիրի հաշվարկների մեջ

---

[1] **Ներսիսյան Ա.,** Կարո Սասունի, Ե., 2004, էջ 155:

[2] **Վահէ Արծրունի**, նշվ. աշխ. էջ 27:

[3] **Ներսիսյան Ա.,** նշվ աշխ, էջ 160:

[4] **Փիրումյան Ռ.,** Հայաստանը Հ.Յ.Դ.-բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում 1917-1921, Ե., 1997, էջ 200:

[5] **Ներսիսյան Ա**., նշվ աշխ., էջ 152, **Փիրումյան Ռ.,** նշվ աշխ., էջ 210 :

[6] **Շահան Նաթալի**, Թիւրքիզմը Անգորայեն Պաքու եւ թրքական օրիէնթասիոն, Ե., 1992, էջ 83-84:

[7]**Շահան Նաթալի**, նշվ աշխ., էջ 110:

առաջնային տեղ էր գրավում Ռուսաստանի և Թուրքիայի միջև գոյություն ունեցող «կովկասյան արգելքի վերացումը». վճռորոշ հողային այդ կամուրջը կարող էր բացվել Ադրբեջանի խորհրդայնացմամբ, Վրաստանի չեզոքացմամբ և Հայաստանի տապալ-մամբ[1]:

Խորհրդայնացումից հետո Ադրբեջանի կառավարությունը ուժեր կենտրոնացրեց Ղարաբաղում՝ այն վերջնականապես Ադրբեջանին միացնելու, իսկ Կարմիր բանակը Բաքու մտավ և ՀՀ ուժերը կարմիր բանակի հետ ընդհարումների մեջ էին Ադրեբջանի սահմանի վրա[2]: Ռ. Փիրումյանը վստահ է, որ խորհրդային զորքերի առաջխաղացումը տեղի էր ունեցել Ադրբեջանի խորհրդարանի և մուսաֆաթական ղեկավարների հավանությամբ. Ղարաբաղի հայությունն ապրում էր թուրքերի, այժմ էլ Կարմիր բանակի հարձակումների ամենօրյա վտանգի ներքո[3]: «Բոլշևիկյան Ռուսաստանի ձգտումները զուգադիպում էին թրքական շահերին, և Հայաստանի հայ բոլշևիկները շարունակում էին մնալ ռուսական օրիենտացիայի տեսակէտի վրայ…»[4]:

Այնինչ Քյազիմ Կարաբեքիրը պահը հարմար էր համարում հարձակման համար, քանի որ Ադրբեջանի խորհրդայնցմամբ պառակտում էր առաջացել հայերի մեջ, որոնց մի մասը միացել էր բոլշևիկներին և գործում էր ընդդեմ դաշնակների[5]:

Այս ամենի արդյունքում 1920թ. օգոստասի 24-ին Մոսկվայում կնքվեց համաձայնության դաշինք Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև. Ռուսաստանն ակնկալում էր համաշխարհային հեղափոխությունը տարածել Թուրքիայում մինչև Խորհրդային Ադրբեջան, թուրքերը հույս ունեին Ռուսաաստանի օժանդակությամբ խորտակել Հայաստանի անկախությունը և կործանել այն[6]: Ակնհայտ էր, որ Թուրքիան երկդիմի քաղաքականություն էր վարում՝ հարաբերություններ կառուցելով մի կողմից Խորհրդային Ռուսասատանի, մյուս կողմից՝ դաշնակից երկրների՝ Ֆրանսիայի, Իտալիայի հետ, և օժանդակություն էր ստանում[7]: Այսպիսով, Թուրքիայի երկդիմի քաղաքականության արդյունքում ինքնըստինքյան մրցակցություն էր առաջ գալիս Արևմուտքի և բոլշևիկների միջև: Արևմուտքն իր հերթին վտանգ էր տեսնում ռուս-թուրքական հարաբերությունների առումով և ստիպված գնում էր զիջումների:

---

[1]**Հովհաննիսյան Ռ.,** Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Երևան, 2016, էջ 158:

[2]**Մսըրլեան Զաւեն,** Երեք դաշնագիրեր, Պէյրութ, 1979, էջ 37:

[3]**Փիրումյան Ռ.,** նշվ աշխ., էջ 182,186:

[4]**Կարօ Սասունի**, Ռուսական Օրիենտացիան, «Հայրենիք», Պոսթըն, 1928, յունուար, թիւ 6, էջ 108:

[5]**Հովհաննիսյան Ռ.,** նշվ աշխ., էջ 170:

[6]**Կարօ Սասունի**, Մայիսեան խռովութիւնները եւ թաթարական ապստամբության շրջանները (Հայաստանը 1920 թվականին), Պէյրութ, 1968, էջ 125:

[7] **Զաւեն Մսըրլեան,** նշվ աշխ., էջ 37:

Մյուս կողմից՝ թուրք գործիչները 1920թ. ամռան ընթացքում Բաքվում ապահովում էին բոլշևիկների համագործակցությունը, իսկ Թիֆլիսում շոշափում էին Վրաստանի բռնելիք դիրքն այդ հարձակման դեպքում[1]:

Ինչ վերաբերում է Վրաստանի դիրքորոշմանը, ապա Շ. Նաթալին իր վստահությունն է հայտնում, որ հակահայկական քայլերում վրացիներն ու թուրքերը ևս գործում էին համերաշխ, և քեմալականները վստահ էին, որ պատերազմի դեպքում Վրաստանը չեզոքություն կպահպանի[2]: Վրաստանի զինվորական և ներքին գործերի նախարար Ռամիշվիլին հայտարարեց, որ «...Աջարիայի, Ախալցխայի և մյուս սահմանամերձ շրջանների մահմեդական բնակչությունը խիստ հակառակ կլինի Մուստաֆա Քեմալի դեմ ուղղված որևէ քայլի»[3]: Այդ մասին հստակորեն հայտնել էին վրացի պատվիրակները Վրաստանում հայկական դիվանագիտական ներկայացուցիչներին՝ հայտարարելով, որ չեն պատրաստվում հոգուտ հայերի վտանգել սեփական հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի և Քեմալական Թուրքիայի հետ[4]: Վահե Արծրունին ներկայացնում է վրաց-թուրքական ջերմ հարաբերությունները, նրանց «անբնական կապը», որի վրա ՀՀ ղեկավարությունը չկարողացավ ազդել. «Հայ-թրքական պատերազմի նախօրեակին որեւէ բարեկամական հասկացողութիւն գոյութիւն չուներ Հայաստանի եւ իր դրացի երկու հանրապետութիւնների միջեւ: Մինչդեռ վերջիններն ունէին շատ պարզ եւ գործնական համաձայնութիւններ մեր թշնամիների հետ»[5]: Նա գտնում է, որ Հ. Յ. դաշնակցական կառավարությունը, տուրք տալով հանրային կարծիքին, գործնականորեն չզբաղվեց նաև թուրքերի հետ համաձայնության գալու գործով:

Այնինչ Կովկասյան երեք հանրապետությունները՝ Ադրբեջանը, Վրաստանը և Դաղստանը փորձում են ստեղծել մեկ քաղաքական միություն՝ այն Ռուսաստանից անկախ հռչակելով, որի մեջ Հայաստանն ընդգրկված չէր[6]: Դրա ապացույցն է այն փաստը, որ «Թուրքիայի պատվիրակներն արդեն իսկ գաղտնի բանակցություններ էին վարում Թիֆլիսում՝ հավաստիացումներ տալով, որ թշնամական մտադրություններ չունեն և անգամ ակնարկելով, որ Թուրքիան չի առարկի, եթե Վրաստանը գրավի Հայաստանի հետ վիճարկվող որոշ տարածքներ»[7]:

---

[1] **Փիրումյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 241:

[2] **Զաւեն Մսըրլեան,** նշվ աշխ., էջ 37, **Շահան Նաթալի**, նշվ աշխ., էջ 67:

[3] **Հովհաննիսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 262:

[4] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 82, թ. 7:

[5] **Վահէ Արծրունի**, Հայ-տաճկական պատերազմը, հայ սպայութիւնը, Շատախ, Երեւան, 2002, էջ 27 :

[6] **Շահան Նաթալի**, նշվ աշխ., էջ 160:

[7] Խոսքը Խոսքը Կուր գետի հոսանքով ու նրանից արևելք գտնվող Արդահանի շրջանի Գյոլե և Չըլդր շրջանների մասին է, որոնք Վրաստանի կողմից հետախուզվում էին, իսկ հետո վերջինիս կողմից զորք մտցվեց: Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.,** նշվ աշխ., էջ 258-259:

Այսինքն՝ Հայաստանը կանգնած էր թուրքական արշավանքի շեմին, իսկ մենշևիկներին ու մուսաֆաթականներին դա չէր հետաքրքրում[1]:

Սփյուռքահայ պատմագիտությունը հստակորեն ընդգծում է Հայաստանն ու հայ ժողովրդին վերջնականապես ոչնչացնելու, համաթուրքականության ճանապարհին ամեն մի խոչընդոտ վերացնելու Թուրքիայի ծրագիրը, ինչը «…մեզի համար կը նշանակե Անատոլուի միացումը Ազրպէյճանի հետ՝ Հայաստանի դիակին վրայով: …Մեր աչքերուն առջև կը խորանայ եւ կը քարանայ «**Պէտք է ոչնչացնել Հայաստանն ու հայութիւնը, որ կանգնած է Անգորայի եւ Պաքուի միջեւ**» թրքական նշանախօսը» (ընդգծումը՝ հեղինակի)[2]: Ադրբեջանը գիտակցում է, որ ինքը «թաթար-թուրք է, իրեն ներշնչուեցաւ համաթուրանականութիւնը եւ առնուազն իր եղբայրակիցներուն հետ միանալու ծրագիրը»[3]:

Կ. Սասունին պատերազմը համարում է անխուսափելի, բայցև չի ժխտում, որ կառավարությունն ըստ պատշաճին չվերաբերվեց ու չնախապատրաստվեց. «Ծագելիք պատերազմը արգիլելը Հայաստանեն կախված չէր: Քաղաքական կացությունը ցույց կու տար, որ ան անպայման պիտի պայթեր, բայց… Հայաստանը …զինվորապես անպատրաստ էր թրքական հարձակումները դիմագրավելու»[4]: Կարևորելով Կարսը՝ որպես ռազմավարական նշանակության ամրություն, նա գրում է, որ այնտեղի հայկական զինվորական ու վարչական մարմինները փոխհամագործակցված չէին գործում, ինչից շահեցին թուրքերը, և դա ծանր անդրադարձավ հանրապետության բախտի վրա[5]: Իսկ Կարաբեքիրի բանակը կազմ ու պատրաստ էր իրականացնել «ընդհանուր հարձակում Հայաստանի դեմ» որոշումը[6]:

Այսպիսով, սփյուռքահայ պատմագիտական միտքը բավականին հանգամանորեն անդրադարձել է 1920թ. թուրք-հայկական պատերազմի նախօրեին տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակին: Հեղինակների կողմից փորձ է արվել ներկայացնել հարևան երկրների, Ռուսաստանի և Եվրոպական տերությունների դիրքորոշումն ու քաղաքական վերաբերմունքը պատերազմին, տրվել է խորհրդա-թուրքական մերձեցման վտանգավորությունը: Մյուս կողմից՝ բացահայտվում են ՀՀ կառավարության սխալներն ու բացթողումները, Կարս ամրոցի հնարավորությունների անտեսումը կառավարության կողմից և այլ հանգամանքներ, որոնք հանգեցրին պատերազմի:

---

[1] **Եափուճեան Ավետիս,** Արեւմտահայաստանի կորուստը և անոր պատասխանատուները, Գահիրե, 1970, էջ 18:

[2] **Շահան Նաթալի**, նշվ աշխ., էջ 30-31:

[3] **Նույն տեղում**, էջ 116:

[4] **Ներսիսյան Ա.,** Կարո Սասունի, Ե., 2004, էջ 201:

[5] **Նույն տեղում**, էջ 158:

[6] **Շահան Նաթալի**, նշվ աշխ., էջ 85:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Եափուճեան Ավետիս,** Արեւմտահայաստանի կորուստը և անոր պատասխանատուները, Գահիրե, 1970:
2. **Եազըճեան Գէորգ**, Կարսի 1920թ. անկման խորքային պատճառները, Երեւան, 2007:
3. **Հովհաննիսյան Ռ.,** Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Երևան, 2016:
4. **Մսըրլեան Զաւեն,** Երեք դաշնագիրեր, Պէյրութ, 1979:
5. **Ներսիսյան Ա.,** Կարո Սասունի, Ե., 2004:
6. **Շահան Նաթալի**, Թիւրքիզմը Անգորայեն Պաքու եւ թրքական օրիէնթասիոն, Ե., 1992:
7. **Վահէ Արծրունի**, Հայ-տաճկական պատերազմը, հայ սպայութիւնը, Շատախ, Երեւան, 2002:
8. **Կարօ Սասունի**, Մայիսեան խռովութիւնները եւ թաթարական ապստամբության շրջանները (Հայաստանը 1920 թվականին), Պէյրութ, 1968:
9. **Կարօ Սասունի**, Ռուսական Օրիենտացիան, «Հայրենիք», Պոսթըն, 1928, յունուար, թիւ 6:
10. **Փիրումյան Ռ.,** Հայաստանը Հ.Յ.Դ.-բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում 1917-1921, Ե., 1997:
11. ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 82, թ. 7:

ELUCIDATION OF THE MILITARY AND POLITICAL SITUATION ON THE EVE OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 IN THE ARMENIAN DIASPORA HISTORIOGRAPHY

MOVSESYAN NARINE
Junior Researcher
Institute of History, NASRA,
e-mail: narinem2006@gmail.com

In the historical science of Armenia, the diaspora historiography expressed its own attitude to the various issues of the Turkish-Armenian war of 1920. The article presents the reflection of the military-political situation on the eve of the war in Diaspora Armenian historiography, which is extremely important for analyzing and clarifying the causes, nature, course, and end of the war. The primary basis for the study was monographs and articles by diaspora historians. These works were analyzed and compared with the testimonies of the actors.The author of this article made an attempt to identify the coverage of the military-political situation on the eve of the Turkish-Armenian war, the way it is perceived in Armenian diaspora historiography.

As a result, the article reveals the diaspora authors' approaches to the events that caused the Armenian people to face the wide-scaleTurkish invasion, perpetuated in the autumn of 1920.

Thus, the Armenian diaspora historians give us also a deeper understanding of the current unfavorable military-political situation, because they highlight to a considerable degree the political context, tactics of the Turkish diplomacy and its motives that urged and prepared the invasion. The main factors are internal situation and international position of the Republic of Armenia in 1920, its relations with neighboring countries, the Kemalist cooperation with the Russian Bolsheviks, the inevitability of war, and the causes of the fall of Kars.

Most of the diaspora scholars consider the war of 1920 was inevitable. They also confess that the Armenian government was not prepared. As a result of this research we can formulate the main viewpoint of the Armenian diaspora historiography as follows: during the Turkish-Armenian war of 1920 the Armenian people faced the real threat of national destruction by Turkey.

Keywords: *historiography, the Republic of Armenia, Transcaucasia, the Kemalist government, Turkish-Armenian War, military-political, Soviet-Turkish relations.*

ОСВЕЩЕНИЕ ВОПРОСА ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ СИТУАЦИИ НАКАНУНЕ ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. В ИСТОРИОГРАФИИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ

МОВСЕСЯН НАРИНЕ

Младший научный сотрудник Института истории НАН РА

электронная почта: narinem2006@gmail.com

В армянской исторической науке историография ее национальной диаспоры проявляет самостоятельное отношение к различным вопросам турецко-армянской войны 1920г. В данной статье представлено освещение военно-политического положения накануне войны в историографии армянской диаспоры, что очень важно для анализа и выяснения причин, характера, хода и окончания войны. Первоисточниками для данного изучения послужили монографии, мемуары и статьи историков диаспоры. Эти работы были проанализированы и сопоставлены со свидетельствами, действовавших в 1920г. лиц, сыгравших значительную роль в РА. В данной статье предприняли попытку выявить характер освещения событий накануне турецко-армянской войны, как они были восприняты в историографии армянской диаспоры.

В статьи раскрыты подходы диаспоральных авторов к событиям, из-за которых армянский народ был вынужден противостоять широкомасштабному турецкому вторжению, осуществленному осенью 1920г.

Таким образом, историки из армянской диаспоры дают нам углубленное понимание причин сложившейся неблагоприятной военно-политической ситуации,так как они достаточно подробно освещают политический контекст, тактику турецкой дипломатии и двигавшие ею мотивы, побуждавшие и подготовившие вторжение. Главными факторами стали: внутреннее положение и международные позиции РА в 1920г., ее отношения с соседними странами, сотрудничество кемалистов с российскими большевиками, взаимосвязанное с военными действиями Турции в регионе, неизбежность войны, социальные и военные причины падения Карса.

Большинство ученых диаспоры считают, что война 1920 г. была неизбежной. Они также признают, что правительство Армении не подготовилось должным образом к ведению военной кампании.В результате данного исследования мы можем следующим образом сформулировать основные взгляды армянской диаспоральной историографии: в ходе турецко-армянской войны 1920 армянский народ оказался перед реальной угрозой его национального уничтожения Турцией.

Ключевые слова: историография, Республика Армения, Закавказье, кемалисткое правительство, турецко-армянская война, военно-политический, советско-турецкие отношения.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 12.09.2024թ.:
Հոդվածը գրախոսվել է 22.09.2024թ.:
Ընդունվել է տպագրության 30.11.2024թ.: